ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68-Ն որոշմամբ հաստատված
"Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ"

ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ՖԻՆՔԱ ՈՒՎԿ
Փակ Բաժնետիրական Ընկերություն
ՀՀ, ք. Երևան, Ագաթանգեղոս փ. 2ա, հեռ. (+374 12) 55 55 55
էլ. փոստ info@finca.am
Հաշվետվություն թիվ 17, 24.09.2019թ.

"Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել փաստաթղթի ամբողջականությունը":

ստորագրող անձինք՝

Անուշ Պետրոսյան	**Վարչության անդամ, Ֆինանսական տնօրեն**		24.09.19
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Հարություն Զադրյան	**Վարչության անդամ, Իրավաբանական բաժնի ղեկավար**		24.09.19
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները հավաստում եմ՝

Հրաչյա Թոխմախյան	**Վարչության նախագահ, Գլխավոր տնօրեն**		24.09.2019թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

24 սեպտեմբեր 2019թ.

«ՖԻՆՔԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
"FINCA" UNIVERSAL CREDIT ORGANIZATION CLOSED JOINT-STOCK COMPANY
«ՖԻՆՔԱ» "FINCA" 00445174
ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ք. ԵՐԵՎԱՆ REPUBLIC OF ARMENIA YEREVAN

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Տնօրենների խորհրդի անդամները կայացրեցին թիվ 26/2019 որոշումը (հիմք ընդունելով 05.03.2019թ. թիվ 07/2019 որոշումը).

1. Հաստատել 1,500,000,000 (մեկ միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր անվանական ծավալով, անվանական չփոխարկվող արժեկտրոնային ոչ փաստաթղթային պարտատոմսերի երկրորդ փուլի թողարկումը երեք տարի ժամկետով, 10.5% (տասն ամբողջ հինգ տասնորդական տոկոս) տարեկան տոկոսադրույքով:

2. Տեղաբաշխումն իրականացնել «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ տեղաբաշխման համակարգով, որից 1,350,000,000 (մեկ միլիարդ երեք հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով 135,000 (մեկ հարյուր երեսունհինգ հազար) հատ պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումն իրականացնել ստանդարտ փակ աճուրդի անցկացման միջոցով՝ ընդ որում բացառելով ոչ մրցակցային, ինչպես նաև լրիվ բավարարմամբ հայտերի ներկայացումը, իսկ մնացած 150,000,000 (մեկ հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով, 15,000 (տասնհինգ հազար) հատ պարտատոմսերը ձեռք է բերվելու «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ կողմից անվանական արժեքով՝ որպես շուկա ստեղծող՝ երկրորդային շուկայում պարտատոմսերի իրացվելիության և ներդրումային գրավչության բարձրացման նպատակով:

3. Պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումն իրականացնել 2019 թվականի սեպտեմբերի 24-ին՝ մեկանգամյա աճուրդի անցկացման միջոցով՝ համաձայն սույն որոշմանը կից Հավելված 1–ում ներկայացված թողարկման վերջնական պայմանների: